# ԱՍՏՎԱԾ ԿԱՐՈՂ Է ԳՈՐԾԱԾԵԼ ՑԱՆԿԱՑԱԾ ՄԱՐԴՈՒ

Հրաշալի Ողորմություն - Մաս 3

*«Ձեր անձերը ներկայացրեք Աստծուն, մեռելներից կենդանացածներ, և ձեր անդամները՝ արդարության գործիք՝ Աստծուն:»* Հռովմայեցիս 6:13

Պողոսի գաղտնիքը մշտապես օգտակար լինելու վերաբերյալ
Բ Կորնթացիս 4:1-18

## 1. Չմոռանամ, որ այս ամենը Աստծո ողորմության շնորհիվ է

*«Այս ծառայությունն ունենալով, ինչպես որ <u>ողորմություն</u> գտանք, չենք ձանձրանում:»* Բ Կորնթացիս 4:1

*«Քանի որ դուք իմ վարքի մասին լսել եք…որ Աստծու եկեղեցին չափից դուրս հալածում էի և կործանում այն:…Բայց …Աստված <u>բարեհաճեց</u>, որ իմ մոր որովայնից ինձ որոշել ու իր <u>շնորհով</u> կանչել է.»* Գաղատացիս 1:13, 15

*«Նրա ստեղծագործությունն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնք Աստված առաջուց պատրաստեց մեզ համար, որպեսզի դրանով ընթանանք:»* Եփեսացիս 2:10

## 2. Անկեղծ Լինեմ

*«Խորամանկությամբ չենք վարվում և Աստծու խոսքն էլ չենք ծռում, այլ ճշմարտությունը բացահայտելով՝ <u>մեր անձերը ներկայացնում</u> ենք բոլոր մարդկանց խղճմտանքին՝ Աստծու առաջ:»* Բ Կորնթացիս 4:2

*«Դուք ծառայությա՛ն հոգին չընդունեցիք, որ դարձյալ վախենաք, այլ որդեգրությա՛ն հոգին ընդունեցիք:»* Հռովմայեցիս 8:15

## 3. Հիշեմ, որ հարցը իմ մասին չէ

*«Որովհետև մենք ոչ թե մեր անձերն ենք քարոզում, այլ Տեր Հիսուս Քրիստոսին, և մենք ձեր ծառաներն ենք Հիսուսի համար:»*
Բ Կորնթացիս 4:5

*«Այս գանձն ունենք հողե անոթներում, որպեսզի զորության գերազանցությունն Աստծունը լինի և ոչ թե մեզանից:»* Բ Կորնթ 4:7

## 4. Օգտագործեմ իմ ցավը՝ ուրիշներին օգնելու համար

*«Ամեն բանում նեղված ենք, բայց ճնշված չենք, կարոտ ենք, բայց տարակուսած չենք, հալածված, բայց երեսից չնկած, վայր ընկած, բայց չկորած:»* Բ Կորնթացիս 4:8-9

*«Ամեն ինչ ձեզ համար է, որպեսզի շատացած շնորհը շատերի գոհությամբ ավելանա Աստծու փառքի համար:»* Բ Կորնթացիս 4:15

*«Դրա համար չենք վհատվում, այլ թեև մեր արտաքին մարդը փչանում է, բայց մեր ներքին մարդն օրեցօր նորոգվում է: Որովհետև մեր այժմյան թեթև նեղությունը անգերազանցելի հավիտենական փառքի մեծություն է գործում մեզ համար:»* Բ Կորնթացիս 4:16-17

## 5. Կենտրոնանամ հավիտենականության վրա

*«Մեր այժմյան թեթև նեղությունը անգերազանցելի հավիտենական փառքի մեծություն է գործում մեզ համար:»* Բ Կորնթացիս 4:17

*«Քանի որ այս երևացող բաներին չենք նայում, այլ աներևույթներին, որովհետև երևացողները ժամանակավոր են, իսկ աներևույթները՝ հավիտենական:»* Բ Կորնթացիս 4:18

Կենտրոնացած մնալու գաղտնիքը – Փոքր խումբ

*«Երկուսը լավ է քան թե մեկը … որովհետև … եթե մեկն նրան բռնություն անի, երկուսը նրա դեմ կկանգնեն. և երեքպատիկ թելը շուտով չի կտրվի:»* Ժողովող 4:12

*(Հիսուս)«Որովհետև ուր որ երկու կամ երեք հոգի իմ անունով հավաքված լինեն, ես այնտեղ, նրանց մեջ եմ:»* Մատթեոս 18:20

Կուզե՞ս որ Աստված գործածի քո կյանքը:

Պատրա՞ստ ես ճաշակելու ողորմության հրաշքը

Հաջորդ Կիրակի:

«ԱՍՏԾՈ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԻՄ ՁԱԽՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Հովիվ Սարո Խաչիկեան